ք. Երևան 13.հունիսի. 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 039706-2

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԵՆԹԱԿԱ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ավետիսյանս, համաձայն ՀՀ ՊԵԿ նախագահի 23.05.2019թ. թիվ ԱՀ 039706 հանձնարարագրի, ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը և 13.05.2019թ. թիվ 799/05-Ա վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

<ՈՒՂևՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ> ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 00896882, պետ. գրանցման համարը՝ 282.110.882276, հասցե՝ ք.Երևան, Գայի պող., 18-15) վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 13.05.2019թ. կայացվել է վարչական վարույթ դրոշմանիշային վճարի գծով 720.000 դրամի չափով չկատարված հարկային պարտավորությունը գանձման թիվ 799/05-Ա որոշումը:

Նկատի ունենալով, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401 հոդվածի համաձայն գանձման ենթակա չկատարած պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Արդյունքում <ՈՒՂևՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ> ՍՊ ընկերության 13.05.2019թ. թիվ 799/05-Ա վարչական վարույթի շրջանակներում 10.06.2019թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 681.000 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն <ՈՒՂևՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ> ՍՊ ընկերության բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության հետևանքով անհրաժեշտ է ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով արգելանք կիրառել արգելանքի ենթակա այլ գույքի վրա:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 429-րդ 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Արգելանք դնել <ՈՒՂևՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ> ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 00896882) պատկանող արգելադրման ենթակա այլ գույքի վրա վարույթ 720.000 դրամի չափով:

Նրան արգելել տնօրինել, տիրապետել, օգտագործել արգելադրված այլ գույքը:

Որոշման պատճեն մեկ օրյա ժամկետում ուղարկել ՀՀ ՈՄ ՃՈ, ՀՀ ԱԳԿՊ կոմիտե, ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայություն, <ՈՒՂևՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ> ՍՊ ընկերությանը:

Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել հարկային մարմին /երկամսյա ժամկետում/ կամ ՀՀ վարչական դատարան: Որոշման արտադատական կարգով բողոքարկումը, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասի, չի կասեցնում որոշման կատարումը:

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված այլ գույքը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Վ.Ավետիսյան _____